ՀԱՐՑԱԴՐՈՒՄ

ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔ ԷԼ ՀԱՍԱՎ

Ինչո՞ւ է փակվում Մելքոնյան վարժարանը

2004թ. մարտի 16-ին, երբ Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչությունը լուր տարածեց, թե մինչեւ 2005թ. հունիսը Մելքոնյան կրթական հաստատությունը փակվելու է, շատերը կարկամեցին: Ինչպե՞ս՝ դպրոց պիտի փակվի Սփյուռքում, այն էլ այսպիսի հայտնի եւ կարեւոր դպրոց, ինչպիսին Մելքոնյա՞նն է: Դպրոց, որը 78 տարվա պատմություն ունի եւ հիմնադրվել է Սփյուռքի հայությանը հայկական միջավայրում կրթելու համա՞ր: Դպրոց, որի շրջանավարտները Սփյուռքում (նաեւ Հայաստանում) առանձնանում են իրենց հայեցի բարձրակարգ կրթությամբ:

Հիմնական հարցը, որի ՀԲԸՄ նախագահ ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿՅԱՆԻՆ տրվում էր օրերս գրողների միության անդամների հետ հանդիպման ժամանակ եւ երեկվա ասուլիսի ընթացքում նույնն էր՝ ինչո՞ւ է փակվում Մելքոնյան կրթական հաստատությունը: Եւ երկու դեպքում էլ Պ.Սեդրակյանը հստակ չէր պատասխանում հարցին:

Ըստ նրա՝ *«որոշումը պայմանավորված է ԿՎ եզրակացությամբ, թե ներկա հայ իրականության մեջ Մելքոնյան վարժարանը չի արդարացնում իր առաքելության նպատակները»:* Ի՞նչ ասել է՝ չի արդարացնում: Պ.Սեդրակյանի մեկնաբանությունը պայմանավորված է հատկապես վերջին տասնամյակում Միջին արեւելքից Եվրոպա եւ ԱՄՆ հայության արտահոսքով, ինչը, ըստ նրա, Մելքոնյան վարժարանի աշակերտների վիճակագրական կազմի վրա ազդել է: Բացի այդ, իբր կիպրահայերը սկսել են իրենց երեխաներին ուղարկել օտար վարժարաններ:

Ավելի քան տարօրինակ են Պ.Սեդրակյանի պատճառաբանությունները, քանզի տարեկան 200-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցը (2003-ին՝ 206 աշակերտ) փակելը ոչ մի կերպ չի արդարացվում: Աշակերտների ավելի սակավ գոյության դեպքում էլ չէր արդարացվելու, քանզի Սփյուռքում հայապահպանություն ասվածը էլ ինչո՞վ է, եթե ոչ դպրոցով: Հայաստանում մենք կռիվ ենք տալիս յուրաքանչյուր «օպտիմալացված» դպրոցի համար, երբ հայ մնալու խնդիր չունենք հայրենիքում, մինչդեռ...

Ինչ խոսք, Պ.Սեդրակյանի՝ տարբեր երկրներում հայության ինտեգրվելու գործընթաց ծավալելուն, ներփակ հայկականությունից դուրս գալուն բնավ դեմ չենք, սակայն վերջինս չպետք է լինի մեր ազգայինի հաշվին եւ չպետք է օտարամոլությունը խթանի:

Մելքոնյան վարժարանի 1997թ. շրջանավարտ Հայկ Նազարյանի հավաստմամբ, ՀԲԸՄ-ն Մելքոնյան վարժարանը իրավունք չունի փակելու, քանզի *«այն ստեղծվել է Մելքոնյան եղբայրների կտակով՝ չքավորների համար եւ դեռեւս 5,5 մլն դոլար գումար կա հիմնադրամում»:*

2002-ի շրջանավարտ, հայաստանցի Հայկ Եգանյանի ասելով, Մելքոնյան վարժարանը ոչ միայն ազգային արժեք է, այլեւ նման երկրորդ դպրոց (գիշերօթիկ դպրոց) ոչ Սփյուռքում կա, ոչ էլ Հայաստանում, ուր միավորվում է հայի ոգին՝ որ երկրից էլ լինեն նրանք: *«Թերեւս այս դպրոցում ստացած կրթության շնորհիվ է, որ այժմ գերազանց սովորում եմ Անգլիայում բարձրակարգ համարում ունեցող Լեսթերի համալսարանի 2-րդ կուրսում, ուր միակ հայն եմ»,-* անկեղծանում է Հայկը:

Շրջանավարտների տարածած հաղորդագրության մեջ ասվում է՝ «անցած 78 տարիների ընթացքում ՀԲԸՄ-ն ոչ մի հաշվետվություն չի ներկայացրել, թե ինչ է պատահել Մելքոնյան եղբայրների հարստության հետ եւ ինչպես են ծախսվել հիմնադրամից առաջացած տոկոսները»:

Ահա թե ինչ չափերի է հասել այդ հարստությունը. *«1925թ. Կարապետ Մելքոնյանը հանձնեց իր ամբողջ հարստությունը՝ գործարաններ, հողեր Եգիպտոսում, բաժնետոմսեր եւ այլն, ՀԲԸՄ-ին (Լոզան), որպեսզի հիմնադրվի «Մելքոնյան» հիմնադրամը: Այդ հարստությունը գնահատվել է 425092,5 եգիպտական ֆունտ, եւ ՀԲԸՄ հաշիվները ցույց են տալիս, որ 1925-ին 4647020 ԱՄՆ դոլար գումար է ստացվել: Այսօրվա փողով այդ հարստությունը հասնում է մոտ 1500000000 ԱՄՆ դոլարի: Կարապետ Մելքոնյանի կողմից հստակ ասվել է. «Այս կապիտալի միայն տոկոսները եւ եկամուտները պետք է ծախսվի երիտասարդ աղքատ հայերի կրթության համար»: Մելքոնյան հիմնադրամից այսօր մնացել է 5500000 ԱՄՆ դոլար»:*

Ըստ կտակի՝ ՀԲԸՄ-ն իրավունք չունի վաճառել ոչ Մելքոնյան կրթահամալիրի հողերը, ոչ էլ իրավունք ունի փակելու դպրոցը: Թեպետ հողերի մի մասը արդեն 80-ականներին վաճառվել է, ավելին՝ ՀԲԸՄ-ն 2005-ին դպրոցը փակելու հարց է դնում: *«Այն դեպքում, որ Կիպրոսի բնակչությունն ու կառավարությունը ցանկանում են, որ Մելքոնյան վարժարանը մնա Կիպրոսում եւ արդեն հայտնել են պատրաստակամություն՝ դպրոցին հատկացվող դրամաշնորհները կրկնապատկելու մասին»:*

Վարժարանի շրջանավարտների պահանջը եւ ցանկությունը հստակ է, պայքարը՝ հասկանալի, մինչդեռ ՀԲԸՄ ղեկավարությունը շարունակ հստակ պատասխան տալուց խուսափում է: Իսկ պատասխանը մեկն է՝ նրանք չափից ավելի շատ են ինտեգրվել ամերիկյան միջավայրին եւ մտածում են բացառապես շահույթ ու գերշահույթ ստանալու մասին, մոռանալով, որ Սփյուռքում հայությանը հայ պահողը ազգային դպրոցն է եղել եւ շարունակում է լինել:

ԱՆԱՀԻՏ ԵՍԱՅԱՆ